

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՍԿԻՆ

Նրանք, ովքեր ծանոթ են իմ նախորդ հոդվածներին («Հայաստանի Հանրապետություն», 1994թ., «Կառավարում», 2000թ.) գիտեն իմ տեսակետները եւրոպական քաղաքակրթության մոտակա ապագայի հաշվով: Մյուսների համար հակիրճ ներկայացնեմ դրանք:

ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Եւրոպական պատմության ընթացքում պետական կարգավիճակ ստացած գաղափարախոսությունները (կրոնները) իշխել են *աստիճանաբար նվազող տեւողությամբ*: Այսպես, *քրիստոնեությունը* որպես պետական գաղափարախոսություն հաստատվել է 4-րդ դարի սկզբում եւ գրեթե առանց լուրջ փոփոխությունների գոյատեւել է մինչեւ 17-րդ դարի սկիզբը, երբ նրանում կատարվել են էական վերանայումներ եւ ծնվել է քրիստոնեության կարեւորագույն հոսանքը՝ *բողոքականությունը*: Այս ժամանակամիջոցը տեւել է մոտ **13 դար** եւ այժմ հայտնի նաեւ որպես ավատատիրության ժամանակաշրջան: Բողոքականությունը դարձել է Եւրոպայի տարածքում ազդեցությունների գոտիների վերանայման գաղափարախոսական դրոշմ եւ բարեհաջող կերպով գոյատեւել է շուրջ **3 դար**: Այս դարաշրջանը հայտնի է նաեւ որպես դրամատիրության շրջան: 20-րդ դարի սկզբում ասպարեզ է գալիս նոր գաղափարախոսություն՝ *սոցիալիզմը*, որը գոյատեւում է մինչեւ նույն դարի վերջը՝ **1 դարից** պակաս:

Նշված օրինաչափությունը նկատվել էր դեռեւս 1984 թվականին: Փորձ էր կատարվել դիտել նվազման օրինաչափությունը, որպես երկրաչափական պրոգրեսսիա եւ գտնել դրա գործակիցը: Առաջին մոտեցմամբ այն ստացվեց մոտ 4,2, եւ ընդունելով, որ դրամատիրության դարաշրջանը պայմանականորեն սկսվել է Անգլական մեծ հեղափոխության տարեթվից ստացվեց պրոգրեսսիայի զուգամիտման կետը՝ 2016 թվական, իսկ ընթացող գաղափարախոսության (այսինքն՝ սոցիալիզմի) անկման պահը կանխատեսվեց նույն այդ 1984 թվականին. ինչպես ցույց տվեց կյանքը, սխալն այնքան էլ մեծ չէր, եթե հաշվի առնենք, որ գործ ունենք չափազանց լրոգված եւ վիճակագրական մեծությունների հետ:

Նկատվեց նաեւ, որ յուրաքանչյուր բեկումնային պահին նախորդել է որեւէ հեղափոխական գյուտ *տեղեկատվական միջոցների* ասպարեզում: Այսպես քրիստոնեության հաստատմանը նախորդել էր դրանից մի երկու դար առաջ *ծալովի գրքի* (ի տարբերություն հնագույն *փայթաթների*) ստեղծումը, որը չափազանց արագացրեց տեղեկության գրառման, պահպանման եւ որոնման գործընթացները: Բողոքականության հաստատմանը նախորդել էր *տպագրության* գյուտը: Ռուսական հեղափոխությունից ընդամենը մի քանի տասնամյակ առաջ ստեղծվել էին *հեռախոսը եւ հեռագիրը*, իսկ սոցիալիզմի անկմանը նախորդեց *համակարգիչների* տարածումը: Այս դիտարկումը եւս վկայեց, որ դիտարկվող օրինաչափությունը իրական է, այլ ոչ թե մտացածին:

Մի փոքր տարակուսանք էր առաջացնում նվազման գործակցի պատահական թվացող մեծությունը: Հետազայում, սակայն, նկատվեց, որ ստացված թիվը՝ 4,2, չափազանց մոտ է նշանավոր *ոսկի հատույթի*՝ ϕ թվի խորանարդին. $\phi^3 \approx 4.2358$: Ինչպես հայտնի է ոսկի հատույթը բացահայտվում է ամենատարբեր (քիմիական, կենսադասական, ճարտարապետական եւ այլն) երեւույթների ուսումնասիրման ընթացքում: Այնպես որ դրա հայտնվելը պատմագիտական օրինաչափության մեջ այնքան էլ չզարմացրեց, եւ նույնիսկ հուշեց, որ դատողությունները ճիշտ ուղղությամբ են զարգանում: Իսկ ունենալով արդեն հաջորդ պատմագիտական փուլի (որ ընթանում է ներկայումս) հաստատման փաստը եւ հանգամանքները հնարավոր եղավ ավելի ճշտել օրինաչափությունները, քանի որ լինելով դեպքերի ականատեսը, մենք կարող ենք ավելի ճիշտ առանձնացնել բեկումնային պահը՝ խորհրդային Միության փլուզումը (**1991**): Մինչդեռ անցած փուլերի դեպքում դա շատ ավելի դժվար է անել. նախ, քանի որ դժվար է հասկանալ, թե ո՞ր իրադարձություններն են եղել առավել բեկումնայինները, եւ դրանից բացի հնում ավելի մեծ են եղել ոչ միայն առանձին դարաշրջանների տեւողություններն, այլեւ անցումային փուլերը, որոնք այդպիսով եղել են ավելի լրոգված ու երկարատեւ: Եւ նույնիսկ մեր աչքի առաջ կատարված դեպքերի համար դժվար ասել, թե ո՞րն էր բեկումնային պահը. Բելովեժյան համաձայնագիրը, թե՞, օրինակ, այն պահը, երբ մոսկովյան ամբիոնից հնչեց անմոռանալի «Յենտր մյորտվ»-ը, թե՞ ԳԿՉՊ-ի կազմավորումը, թե՞ ԽՍՀՄ-ը պահպանելու մասին հանրաքվեն եւ այլն: Սակայն այս կամ այն չափով բեկումնային պահերը մեզ հայտնի են: Այսպես, դժվար չէ հասկանալ, որ որպես սոցիալիզմի եւ կապիտալիզմի սահման պետք է ընդունել Հոկտեմբերյան հեղաշրջումը (**1917**), թեւս պարտադիր չէ, որ համապատասխան հանգույցը բացարձակորեն համընկնի այդ տարեթվին. միեւնույն է մենք գործ ունենք վիճակագրական երեւույթների հետ: Ավատատիրության եւ կապիտալիզմի սահմանը պիտի մոտ լինի Երեսնամյա պատերազ-

մի տարիներին, ավելի ճիշտ, Բողոքական միության (1608) եւ Կաթոլիկական միության (1609) տարերթվերին, քանի որ հենց դրա ընթացքում վերջնականապես պարզվեց հին եւ նոր ուժերի «վերջին ճակատամարտի» անխուսափելիությունը: (Տե՛ս աղյուսակը)

| Տեղեկության հիմնական տեխնոլոգիաներ | Պետական կրոններ | Պատմական դեպքեր | Հաշվարկած տարեթվեր | Իրական տարեթվեր |
|---|---|---------------------------------------|--------------------|-----------------|
| | | | 2 012,0 | |
| | | | 2 011,8 | |
| | | | 2 011,5 | |
| ՞ | | | 2 011,0 | |
| | | | 2 010,2 | |
| | | | 2 009,0 | |
| համացանց | | [Իրան, ԱՄՆ-ի փլուզում, ԵՄ-ի փլուզում] | 2 007,0 | |
| | | Իրաք | 2 003,7 | 2003,03,19 |
| | դեմոկրատիա (ամբողջականացում) | Հարավսլավիա | 1 998,4 | 1999,03,24 |
| համակարգիչ | | ԽՍՀՄ փլուզում | 1 989,9 | 1991,12,08 |
| | | Մաոյի մահը, ԽՍՀՄ-ում Լճացում | 1 976,1 | 1976,09,09 |
| | կամուխիզմ (կայսերատիրություն) | Ստալինի մահը, Ջերմացում | 1 953,7 | 1953,03,05 |
| հեռուստացույց | | Լենին, Ռուսական կայսրության փլուզում | 1 917,5 | 1917,11,07 |
| | | | 1 858,9 | |
| | բողոքական քրիստոնեություն (դրամատիրություն) | | 1 764,1 | |
| տպագրություն | | Բողոքական միություն | 1 610,7 | 1608,0,0 |
| | | | 1 362,6 | |
| | քրիստոնեություն (ավատատիրություն) | | 961,0 | |
| գիրք | | Միլանի հրովարտակ | 311,3 | 313,0,0 |
| | | | -740,0 | |
| | [բազմաստվածություն] (ստրկատիրություն) | | -2 440,9 | |
| գիր | | Քաղաքակրթության սկիզբ | -5 193,2 | |
| | | | -28 510,5 | |
| | | | -127 284,4 | |
| Նկարային գիր խոսք մնջալեզու դիմալեզու եւ այլն | | Մարդ (Կրոմանյոն) | -545 697,2 | |
| | | Մարդ (Նեանդերտալ) | -2 318 122,4 | |
| | | Մարդակապիկներ | -9 826 235,7 | |
| | | Կաթնասուններ | -41 631 114,4 | |
| գենայն կող | | Սողուններ եւ այլն | -176 358 742,4 | |
| | | | -747 074 133,2 | |
| | | | -3 164 663 324,1 | |
| [մեզոններ] | | Նյութ | -13 405 735 478,8 | |

Բայց սա դեռ բոլորը չէ: Եթե կարելի է հետեւել օրինաչափությանը դեպի առաջ՝ նվազման ուղղությամբ, ապա ի՞նչ է խանգարում շարունակել այն նաեւ դեպի ետ՝ աճման ուղղությամբ: Որպես ավատատիրական (քրիստոնեական) դարաշրջանի սկիզբ անկասկած պետք է համարել Միլանյան հրովարտակի թիվը (313): Բազմապատկելով ավատատիրական (քրիստոնեական) դարաշրջանի տեւողությունը Φ^3 -ով կունենանք քրիստոնեությանը նախորդող դարաշրջանի տեւողությունը (մոտ **5500 տարի**), որի սկիզբը հայտնվում է մ.թ.ա. 5-րդ հազարամյակի սկզբում: Սա նույնպես շրջադարձային պահ է: Պահ, երբ փաստացիորեն սկսվում է մարդկային քաղաքակրթությունը: Տեղեկատվական միջոցների առումով, սա մեզ հասած հնագույն գրային հուշածանցների տարիքն է: Այսինքն պահպանվում է օրինաչափության նաեւ այդ առանձնահատկությունը. հավանաբար գիրը ստեղծվել էր նվաճ դարաշրջանից որոշ ժամանակ առաջ (թերեւս մի քանի դար կամ մոտ մեկ հազարամյակ առաջ, եթե հաշվի առնենք հնագույն ժամանակների իրադարձությունների լրոզվածությունը):

Ի՞նչ ներքին իմաստ կարող է ունենալ նորանոր տեղեկատվական միջոցների հայտնագործման եւ դիտվող հեղափոխությունների միջեւ: Դա կարելի է հետեւյալ կերպ մեկնաբանել. որպեսզի նոր գաղափարները ճանապարհի հարթեն, նրանք պիտի նախ տարածվեն: Մյուս կողմից, որպեսզի հին գաղափարախոսությունը զիջի իր տեղը, հանրությունը պիտի տեղեկացվի բոլոր այն փաստերին, որոնք վկայում են դրա սխալականությունը:

Իսկ ի՞նչ կունենանք, եթե շարունակենք շարժումը դեպի ետ: Եւս մեկ քայլ, եւ հայտնվում ենք **28 հազար տարի** առաջ: Եւ կրկին պարզվում է, որ սա կարելի է շրջադարձ էր. հնագիտությունը սա համարում է հեղափոխական պահ, երբ անհայտանում են նեանդերտալյան տիպի մարդը եւ աշխարհին տիրում են ժամանակակից տիպի մարդիկ: Դժվար չէ կռահել նաեւ, որ դա չէր կարող չազդել մարդու հաղորդակցական հնարավորությունների վրա: Հավանաբար սրան նախորդել էր տեղեկատվական միջոցների ասպարեզում ինչ-որ մի գյուտ: Այդպիսին կարելի է համարել մեզ հասած հնագույն պատկերագրությունը:

Հաջորդ դարաշրջանները երեւում են աղյուսակից: Սրանց մասին իմաստ չունի մանրամասն խոսել, քանի որ այս դարաշրջանների տեւողության հարցը գիտության համար դեռեւս մշուշոտ է, եւ առայժմ այդ մասին կարելի է միայն ենթադրություններ անել: Սակայն կարելորն այն է, որ ակնհայտ է դառնում նույն օրինաչափության (կյանքի արագացման) տարածումը սոցիալականից՝ կենսաբանական կյանքի վրա: Իրոք, հնագույն կյանքի դարաշրջանը (ըստ գիտական վերջին տվյալների) տեւել է ավելի քան 1.5 միլիարդ տարի, մինչդեռ հաջորդ՝ միջին կյանքի դարաշրջանն ընդամենը մի քանի հարյուր միլիոն տարի, իսկ նոր կյանքի դարաշրջանը՝ սոսկ մի քանի տասնյակ միլիոն տարի: Ինչ վերաբերում է տեղեկատվական միջոցների հարցին (որոնք այս դեպքում իմաստ ունի անվանել արդեն *տեղեկութային*), ապա կյանքն, ինչպես հայտնի է, իր հիմքում նույնպես ունի տեկուլյթի փոխանակման երեւոյթը, որն իրագործվում է բջիջների միջուկներում ԴՆԹ, ՌՆԹ միացությունների միջոցով: Դա նշանակում է, որ կյանքի գոյացումը նույնպես կարելի է դիտել, որպես տեղեկութային նոր «գյուտի» հետեւանք(): Ավելին: Զանի որ կյանքի գոյացման տարեթիվը ստացվում է ոչ կենսաբանական օրինաչափության շրջանակներում, կարելի է եզրակացնել, որ այն գոյացել է օրինաչափորեն եւ միաժամանակ՝ ամբողջ տիեզերքում:

Սակայն սա էլ դեռ բոլորը չէ: Եւս մի ցատք դեպի ետ, եւ հայտնվում ենք 13 միլիարդ տարի հեռավորության վրա: Եւ սա նույնպես պատահական պահ չէ. ներկայիս պատկերացումները տիեզերքի գոյացման մասին (այսպես կոչված «Մեծ պայթյունի» տեսությունը) մոտավորապես այս հեռավորության վրա են դնում տիեզերքի գոյացման պահը: Ասելով տիեզերք, հասկանում ենք նախ եւ առաջ կյանքը: Իսկ կյանքը դա ներմիջուկային ուժերով փոխկապված տարրական մասնիկներն են, եւ ինքը այդ փոխկապվածությունը կարելի դիտել, որպես ներքին տեղեկութային փոխանակություն, իսկ կյանքի գոյացումը կրկին որպես «գյուտ»...

Ինչ վերաբերում է զուգամիտման կետում (ըստ վերջին հաշվարկների՝ 2012 թվականը) եւ դրանից հետո սպասվելիքին, ապա դրա բնագիտական մեկնաբանումը հնարավոր է նույն այդ «Մեծ պայթյունի» տեսության շրջանակներում: Ինքը զուգամիտման կետն ընկալվելու է այդ պահին ապրողների կողմից պարզապես որպես կարճատեւ քաոսական մի վիճակ, որից հետո աշխարհը մտնելու է սեղմման փուլի մեջ, եւ երուբները զարգանալու են դանդաղեցման կարգով: Այսինքն, մոտավորապես հայելային համաչափությամբ պատմական հանգուցային կետերի միջեւ հեռավորությունները հետսհետեւ երկարելու են, կյանքի, գիտության զարգացումը դանդաղելու է: Մնացածով կյանքը սովորական մարդու տեսակետից ոչինչով չի տարբերվելու այսօրվա կյանքից: Միայն հազարավոր (կամ միլիոնավոր տարիներ) անց նկատվելու է Տիեզերքի անցումը սեղմման՝ որպես հեռավոր տիրեզերական առարկաների ճառագայթների մանիշակագույն դոպլերյան շեղման:

Սրանով մեկ միասնական օրինաչափության մեջ են հայտնվում դիտարկվող բոլոր երեւութները. կյանքը, կյանքը եւ բանականությունը...

Հաշվի առնելով, որ նշված օրինաչափությունը ստացվել է φ^3 -ի կարգով, կարելի է փորձել կառուցել այն նաեւ $\varphi \approx 1.618$ գործակցով, որի դեպքում պիտի ստացվեն լրացուցիչ միջանկյալ տարեթվեր: Եւ ահա պարզվում է, որ այդ միջանկյալ թվերը նույնպես հայտնվում են կարելոր իրադարձությունների տեղում, որոնք նշանավորել են, թեեւ ոչ հիմնարար, բայց եւ այնպես շրջադարձային պահեր: Բնականաբար հնագույն անցյալի դեպքում դրանք այնքան էլ հեշտ չէ գատել, սակայն մեզ մոտ կանգնած դեպքերի համար դա, որոշ մոտավորությամբ հնարավոր է: Պատասխանը, թերեւս, այն է, որ հանգուցային կետերում առհասարակ պարտադիր էլ չէ որեւէ նշանավոր իրադարձության առկայությունը, քանի որ, ինչպես ասվեց, մենք գործ ունենք վիճակագրական երեւութների հետ: Խնդիրը ոչ թե այս կամ այն իրադարձությունն է, այլ բազմաթիվ իրադարձությունների խտացումը տվյալ պահին: Ինչպես նաեւ դրանց հզորությունը, այսինքն այն ազդեցությունը, որը նրանք թողնում են աշխարհի վրա:

Վերջերս, Ցանցում գտնվեց մի ուշագրավ հոդված (A. Д. Панов, Кризис планетарного цикла Универсальной истории и возможная роль программы SETI в посткризисном развитии): Վերակողմավորումը թվագրված է 2004-ի հունվարով): Հեղինակը նկատել է պատմության թափափածեւ եւ արագացող ընթացքի փաստը, սակայն աչքաթող է արել կապը տեղեկութային երեւութների հետ, եւ հայացքը այլ հանգուցային իրադարձությունների վրա բեւեռացնելու արդյունքում ստացել է հիշված երկրաչափական պրոգրեսսիայի մեկ այլ գործակից, մոտ՝ 2.66, որը նա կապում է բնական լոգարիթմների հիմքին՝ $e \approx 2.718$, մինչդեռ նույն թվին մոտ է նաեւ մեկ այլ թիվ $\varphi^2 \approx 2.618$...

Առհասարակ, վերջին ժամանակներում կտրուկ աճել են գուշակումները, որ 21-րդ դարի երկրորդ տասնամյակում պիտի ինչ-որ աշխարհացունց բաներ կատարվեն: Դրանցից մեծ մասը տարբեր տեսակի պայծառատեսների գուշակումներ են, այսինքն գուշակումներ, որոնք չեն հիմնված որեւէ օբյեկտիվ դա-

տողությունների վրա: Կան իհարկե, նաեւ որոշ գուշակումներ, որոնց հիմքում ժամանակակից տնտեսական հաշվարկներ են, որոնք, թեւ հիմնված են տրամաբանական դատողությունների վրա, սակայն դիտարկում են իրականության սուկ մի կողմը: Բայց կարելու է այն, որ բնագրաբար շատերն են զգում, որ ինչ-որ բան է սպասվում, թեւ ոչ բոլորն են փորձում գտնել իրենց զգացումների օբյեկտիվ պատճառները:

ԿԱՆԱՏԵՍԱՆ ՓՈՐՁ

Իհարկե, քաղաքական կանխատեսումներին, սովորաբար, լուրջ չեն վերաբերում: Բավական է հիշել Բ. Չերչիլին վերագրվող ծամծամված կատակն այն մասին, թե քաղաքագետը պիտի կարողանա կատարել գուշակումներ, եւ հետո բացատրել, թե ինչու դրանք չիրականացան: Սակայն քաղաքական հավաստի գուշակումներն անհնարին չեն: Պարզապես քաղաքագիտությունը մինչ այսօր չի ունեցել իր պահանջներին բավարարող որեւէ վստահելի գիտական տեսություն:

Առհասարակ տվյալ տեսության ճշմարտացիության մասին կարելի է դատել հենց նրանից, թե որքանով է այն հնարավորություն ընձեռում ուսումնասիրվող առարկայի նախորդ վիճակների հիման վրա կանխատեսել դրա ապագա վիճակները: Քաղաքագիտության առարկան՝ ազգերի (պետությունների) փոխհարաբերություններն է, սակայն, ի տարբերություն այլ գիտությունների, նրա առարկայի նախորդ վիճակն ուսումնասիրում է արդեն մեկ այլ գիտություն՝ պատմագիտությունը, իսկ պատմագիտության եւ քաղաքագիտության կապը համարժեք ուշադրության չի արժանանում: Արդյունքում պատմագիտությունը վերածվում է պարզ պատմության, ինչպես հիմնականում այն եւ կոչվում է, իսկ քաղաքագիտությունը չի ստանում կանխատեսումներ կատարելու հիմքերը:

Շարադրված դիտակրումները կարող են օգնել գուշակումներ կատարելու գործում: Նաեւ՝ մեր երկրի ապագայի կանխատեսման համար, եւ դա պիտի հետաքրքիր լինի նախ եւ առաջ նրանց համար, ովքեր առաջնորդում են երկիրը դեպի այդ ապագան: Այսինքն՝ քաղաքական գործիչների համար:

Եւ այսպիսով ի՞նչ է սպասում մեզ:

Ինչպես երեւում է աղյուսակից, առաջիկայում ճգնաժամային հանգույցների միջեւ հեռավորությունը էլ ավելի է կրճատվելու: Դրանք լինելու են մոտավորապես 2007, 2011, 2012 թվերը: Վերջին թվականի ընթացքում մինչեւ մի քանի ամիս եւ օր կրճատված դրանց տեղողությունները արդեն որեւէ գործնական իմաստ չեն ունենալու, քանի որ այդպիսի կարճ ժամանակահատվածում ոչ մի գաղափար չի հասցնելու հաստատվել ամբողջ աշխարհում եւ դա լինելու է գաղափարական եւ քաղաքական կատարյալ խառնաշփոթի տարի:

Այսպիսով, ընթացիկ՝ 2006, կամ հաջորդ տարվա ընթացքում, տեղի է ունենալու ներկայիս իշխող գաղափարախոսության՝ այսպես կոչված *դեմոկրատիայի* կործանումը, որին կհաջորդի մի որեւէ նոր գաղափարախոսություն: Ընդ որում, շատ հնարավոր է, որ այն նույնպես կոչվի «դեմոկրատիա», քանի որ շատ գրավիչ է Ժողովուրդների համար այդ գաղափարը, ու հազիվ թե դրանից հրաժարվեն: Հավանաբար այն կհավելվի մի ինչ-որ ճշտող մակդիրով, ինչպես դա մենք տեսնում ենք վաղ քրիստոնեության եւ նոր՝ *բողոքական* քրիստոնեության դեպքում: Օրինակ անվանեն այն *գարգացած* դեմոկրատիա (հիշո՞ւմ եք «գարգացած սոցիալիզմ»): Իսկ հաղթած նոր գաղափարախոսության կողմնորդ կհայտարարեն, թե ԱՄՆ-ը, Միացյալ Եւրոպան, բռնադատել էին դեմոկրատիայի «սուրբ» սկզբունքները, մինչդեռ իսկական դեմոկրատիան հենց իրենք են «կառուցելու»: Սակայն այս նոր գաղափարախոսությանը կմնա հազիվ մոտ 4-5 տարվա գոյատևման ժամանակ:

Կա գործնականում ավելի կարելու հետեւություն եւս: Պատմությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր դարաշրջանի վերջում դիտվում է հիմնական կայսրությունների փլուզում: Այսպես, նախաքրիստոնեական կրոնի կործանման արդյունքում կործանվեց հին Հռոմեական կայսրությունը: Նրա տեղում ձեւաորվեցին քրիստոնեական Բյուզանդիան եւ Սրբազան Հռոմեական կայսրությունները, որոնց կործանումը նշանավորեց սկզբնական քրիստոնեության կործանումը: Ռուսական, Գերմանական եւ Ավստրա-Հունգարական կայսրությունների կործանումով ավարտվեց դրամատիոյության փուլը: Հաջորդ փուլը նշանավորվեց Խորհրդային կայսրության փլուզմամբ: Ներկայիս քաղաքական դաշտում կենտրոնական կայսրություններն են ԱՄՆ-ն եւ Եւրամիությունը: Դրանից հետեւում է, որ առաջիկա մեկ-երկու տարիների ընթացքում կործանվելու են հենց սրանք: Եւ վերջին ամիսներին նկատվող լարվածության աճը հուշում է, որ նման հեռանկարներն այնքան էլ անհավանական չեն:

Լարվածությունը երեւում է ամեն ինչում: Դա ե՛լ ՄԱԳԱՏԵ-ից Իրանի միջուկային ծրագրի քննարկումը ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ փոխանցելն է, ե՛լ ծաղրանկարների խայտառակ միջադեպը, ե՛լ ԽՂՄՂ-ի հաղթանակը, դրան հաջորդած հայտարարություններով, ե՛լ հարավսլավական պատերազմի

սերը ղեկավարների՝ Մլադիչին, Կարաչիչին Զաազայի դատարանին հանձնելու պահանջների նոր թափով բարձրացումը, ե՛լ խորհրդային միության փլուզման հետ կապված գրեթե բոլոր թեժ կետերի կրկին թեժացումը՝ Մերձդնեստրովյեյում, Աբխազիայում, Օսյայիում: Նաեւ Րամբուլյեյի բանակցությունների տապալումից հետո դարաբաղյան սահմանում փոխիրաձգությունների հաճախացումը: Եւ այլն, եւ այլն: Այնպիսի տպավորություն է, կարծես չեն եղել անցած 15 տարիները. նույն խնդիրները, նույն մեկնաբանությունները, նույն տազնապը...

Վերջերս Կոսովոյի խնդրի՝ հոգուտ Զարավալափայից դրա անջատմանը ԱՄՆ-ի նկատվող հակվածության վերաբերյալ Պուտինի արված ակնարկն այն մասին, որ ահրաժեշտ է համապիտանի լուծում, որը հնարավոր կլինի կիրառել նաեւ այլ խնդիրների լուծման համար, կարելի է դիտել որպես դիվանագիտական նրբանկատությամբ արված զգուշացում, որ դրա արդյունքում վերջ կդրվի Երկրորդ աշխարհամարտից հետո ձեւավորված սահմանների անխախտության սկզբունքին: Դա ամենեւին չի կարող պատճառ լինել խանդավառության համար, թե, իբր, այդ դեպքում Արցախի խնդիրն էլ մե՛ր օգտին կլուծվի: Դա նշանակում է սոսկ, որ այսուհետ որեւէ սկզբունք առհասարակ չի մնա միջազգային հարաբերություններում: Իսկ դա արդեն հղի է միջազգային խոշոր ռազմական ընդհարմամբ, որպիսին ժողովրդի մեջ ընդունված է անվանել Զամաշխարհային պատերազմ:

Ինչի՞ այն կարող է հանգեցնել: Նախ դա, ինչպես ասվեց, կբերի ԱՄՆ-ի, որպես պետական կազմավորման վերացմանը: Ի դեպ Ամերիկայի մոտալուտ կործանումն այսօր չեն զգում միայն անուղղելի «լավատեսները»: Ամերիկան դեպի կործանումը տանող երկրի ղեկավարության քայլերը քննադատում են այնպիսի հայտնի վերլուծաբաններ, ինչպիսիք են, օրիանկ, Չբիգնեւ Բժիգինսկին կամ Գոր Վիդալը:

Թերեւս, ինչպես եւ ԽՍՀՄ-ի փլուզման դեպքում էր, տեղի կունենա տրոհում՝ հիմնականում նույն այն գծերով, որով ԱՄՆ-ը կազմավորվել էր եւ որով այսօր բաժանվում են Ամերիկային անգլասաքսոնական եւ մեքսիկական ազգաբնակչությունները: Զավանաբար (ինչն էր դա եղավ նաեւ ԽՍՀՄ-ի դեպքում) նախապես կփլուզվի դոլլարային համաշխարհային «բուրգը», իչնը կբերի համաշխարհային ֆինանսական համակարգի քայքայմանը: Արդյունքում, ԱՄՆ-ը կորցնելով իր առաջատար դերն աշխարհում կմնա որպես շարքային երկիր (հաշվի առնելով նրա մեծությունը՝ թերեւս՝ Բրազիլիայի կարգի), որը դեռ որոշ ժամանակ չի կարողանա լուրջ ազդեցություն ունենալ Զին աշխարհի քաղաքական անցուղարձին:

Ինչ վերաբերում է Եւրոպային, ապա կանգ կառնի նրա միավորման ընթացքը եւ կվատթարանա տնտեսական վիճակը: Զավանաբար դոլարի ճակատագիրը կկիսի նաեւ Եւրոն եւ աշխարհի տնտեսական կետնտրոնը կտեղափոխվի հարավ-արեւելյան Ասիա:

Ներկայումս Զայաստանի շուրջ իրադրության վերահսկումը կատարվում է հիմնականում ԱՄՆ-ի, Եւրոպայի, Ռուսաստանի, Իրանի մասամբ էլ՝ Չինաստանի կողմից: Եթե խաղից դուրս գան առաջին երկուսը, տարածաշրջանի վերահսկողությունը կմնա հիմնականում Ռուսաստանի, Իրանի եւ Չինաստանի վրա: Այստեղ պետք է դիտարկել երկու տարբերակ. Արեւմուտքի խաղից դուրս գալը Իրանական պատերազմի միջոցով, կամ առանց դրա: Առաջին տարբերակը վատագույնն է Զայաստանի համար, քանի որ տարածքում կհաստատվի կատարյալ անիշխանություն, իսկ այդ պայմաններում թուրքական տարրի թվային գերակշռությունը կարող է շատ ծանր լինել մեզ համար: Այս դեպքում դեռ պետք է դիտարկել երկու ենթատարբերակ. Թուրքիայի պահպանումը որպես միասնական պետության եւ նրա տրոհումը եւս: Երկրորդ դեպքը կբացառի թուրքական տարրի հարվածը արեւմուտքից, սակայն այն կստեղծի նոր խնդիր, ի դեմս քրդական տարրի քաղաքական խաղի անդամ դառնալուն: Թեեւ սա նաեւ մի շատ խղճուկ, բայց այնուամենայնիվ նշմարվող տարբերակ կստեղծի Զայքի տարածքային ամբողջականության վերականգնման համար:

Եթե Իրանական պատերազմ չլինի, Իրանը կմնա որպես տարածաշրջանային ազդեցիկ ուժ եւ դա որոշ չափով հաշվարկելի կդարձնի իրավիճակը, թեեւ այն միեւնույն է չափազանց խառը կլինի:

Բոլոր դեպքերում, եթե Զայաստանը զիջի իր արեւելյան տարածքները Ադրբեջանին, ապա տարածաշրջանից Արեւմտյան ուժերի հեռանալուց հետո այն կհայտնվի լիակատար սևանկության մեջ: Նույնիսկ եթե հայոց բանակին հաջողվի վերանվաճել այդ տարածքները, դա արվելու է արդեն խոշորագույն կորուստների գնով: Իսկ ավելի հավանական է, որ դա չի էլ հաջողվի: Այնպես որ առաջիկա մեկ-մեկուկես տարվա համար մեր իշխանությունները պիտի ամեն գնով պահեն արեւելյան մարզերը: Իսկ 2008-ից հետո դրանք զիջելու առաջարկով էլ ոչ ոք Զայաստանին չի էլ դիմի:

Ռուբեն Թարումյան
09.02.2006